

## **Կոտայքի մարզպետը Չարենցավանում մասնակցել է «ՀՀ վարչապետի գավաթ» սիրողական սեղանի թենիսի մրցաշարի եզրափակիչ խաղին**

Կոտայքի մարզպետ Ահարոն Սահակյանը Չարենցավանի Արա Մանուկյանի անվան մանկապատանեկան մարզադպրոցում մասնակցել է ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի գլխավորությամբ անցկացված «Հայաստանի Հանրապետության վարչապետի գավաթ» սիրողական սեղանի թենիսի մրցաշարի եզրափակիչ խաղին:

Տարբեր տարիքային խմբերում հայտնի են դարձել եզրափակիչ փուլի հաղթողները, որոնց պարգևատրել են ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը, Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարար Ժաննա Անդրեասյանը, ԿԳՄՍ նախարարի տեղակալ Կարեն Գիլոյանն ու Առողջապահության նախարարի տեղակալ Լենա Նանուշյանը:

Միջոցառմանը ներկա են եղել նաև Չարենցավան համայնքի ղեկավար Հակոբ Շահգալդյանը, պաշտոնատար այլ անձինք:

Տղամարդկանց առաջին տարիքային խմբում՝ 18-ից 40 տարեկան, մրցաշարի հաղթողի տիտղոսը երկրորդ տարին անընդմեջ նվաճել է Գարեգին Չախոյանը Գյումրիից, երկրորդ տեղը զբաղեցրել է Էդուարդ Հակոբյանը, իսկ երրորդ լավագույն արդյունքը ցույց է տվել Նարեկ Գրիգորյանը: Նրանց պարգևատրել է ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը: Վարչապետը հուշանվերներով է պարգևատրել նաև մրցաշարի ամենատարեց կին և տղամարդ մասնակիցներին՝ Էմմա Առաքելյանին (ծնված 1951 թ., ք. Կապան) և Կարեն Բեզլարյանին (ծնված 1957 թ., ք. Կապան):

Կանանց 18-40 տարիքային խմբում երկրորդ տարին անընդմեջ հաղթել է Աելիտա Ղազարյանը, երկրորդ տեղը զբաղեցրել է Հասմիկ Միմոնյանը, իսկ լավագույն եռյակը եզրափակել է Վերգինե Ղարիբյանը: Նրանց պարգևատրել է ԿԳՄՍ նախարար Ժաննա Անդրեասյանը:

Կանանց երկրորդ տարիքային խմբում՝ 41 և բարձր տարիքի, հաղթողի կոչմանը երկրորդ տարին անընդմեջ արժանացել է Լիլիթ Գրիգորյանը, երկրորդ տեղը զբաղեցրել է Սուսաննա Հովեյանը, իսկ լավագույն եռյակը եզրափակել է Անահիտ Կրմզյանը: Նրանց պարգևատրել է ԿԳՄՍ նախարարի տեղակալ Կարեն Գիլոյանը:

41 և բարձր տարիքի տղամարդկանց պայքարում հաղթող է ճանաչվել Արթուր Գրիգորյանը, երկրորդ տեղը զբաղեցրել է Մարգիս Լալազարյանը, իսկ լավագույն եռյակը եզրափակել է Կարեն Հարությունյանը: Նրանց պարգևատրել է Առողջապահության նախարարի տեղակալ Լենա Նանուշյանը: